



**Team Armenia, Inc.**

P.O. Box 443, Roswell, GA 30077

Tel/Fax: (770)552-2579

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԱԹԼԱՆԹԱ ԺԱՄԱՆԵՑԻՆ**

Միաջազգային Ողիմպիական խաղերու Հարիւրամեակի մրցաշարքերու տեւողք, որ արդէն իսկ սկսած էր ամիսներ առաջ, Աթլանթայի մէջ, աստիճանաչափի վրայ հասած է գագաթնակէտին: Վերջին օրերն են նախապատրաստութիւններու աշխատանքներուն: Ամբողջ ֆաղաք արդէն իսկ հագած է ողիմպիական հագուստ: Մի քանի օր մնացած է ողիմպիական խաղերու պաշտօնական քացումին, որ տեղի կ'ունենայ Ուրբաթ 19 Յուլիսին, երբ 197 երկիրներէ մօտ 15.000 մարզիկներ, տողանցֆով եւ հանդիսութիւններով, իրենց ազգային դրօշները պարզած, պիտի բարձրացնեն ողիմպիական աւանդական ջահը որ պիտի լուսաւորէ ֆաղաքը, ինչպէս նաեւ հոս ժամանող շուրջ երկու միլիոն հիւրերը եւ ամբողջ աշխարհը՝ հեռատեսիլներու, արբանեակներու, ռատիոներու, մամուլի, ելեկտրոնիկ «մէյլ» ի եւ նորագոյն թեֆնոլոնիի բոլոր միջոցներով:

Աթլանթա, արդէն իսկ դարձած է աշխարհի ուշադրութեան կեդրոնը, աղբիւր մը հպարտութեան եւ խանդավառութեան: Առիթ մը որմէ գրկուած էր Հայ Ազգը դարերէ ի վեր:

Աթլանթայի ողիմպիական ջահը այս տարի իր լոյսը պիտի սփռէ նաեւ Հայ աշխարհի վրայ, որովհետեւ, ինչպէս ամիսներէ ի վեր կը սպասէինք, կը կարդայինք, կը գրէինք թէ «Հայերը կուգան», այո, ականատեսի վկայութեամբ կը յայտնենք թէ Հայաստանի խումբը եւ Հանրապետութեան ողիմպիական պատուիրակութիւնը, Երեւանէն թռիչք առնելով, Մոսկուայի եւ Նիւ Եորքի վրայով, Երկուշաբթի 15 Յուլիսի երեկոյեան էջֆ կատարեց Աթլանթայի միջազգային օդակայանը ուր Հայ մարզիկները դիմաւորուեցան Հայաստանի Ողիպիական Կոմիտէի եւ Աթլանթայի Հայ գաղութին ներկայացուցիչներուն կողմէ, առաջնորդուեցան ողիմպիական խաղերու «աֆրետիթէյշն» ի կեդրոնը ուր նոյն օրը, աշխարհի զանազան մասերէն հասած էին 9000 մարզիկներ եւ պատուիրակներ: Պաշտօնական բոլոր գործողութիւններու աւարտէն ետք, առաւօտեան փոքր ժամերուն Հայ մարզիկները ստացան իրենց «պեն»երը եւ առաջնորդուեցան «Օլիմպիկ Վիլէյն», ժամանակաւոր բնակարանը բոլոր մարզիկներուն:

**ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳՈՎ, ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ  
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՃԱՇԿԵՐՈՅԹՈՎ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ  
ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՆ ԱԹԼԱՆԹԱՅԻ ԳԱՂՈՒԹԻՆ ԿՈՂՄԷ**

Աթլանթայի թիւով փոքր Հայկական գաղութը կազմակերպած էր մեծ ընդունելութիւն ի պատիւ Հայաստանէն ժամանած 30 ողիմպիական մարզիկներուն, անոնց ընկերակցող 25 մարզիչներուն եւ պատասխանատուներուն եւ 7 պաշտօնական պատուիրակներուն, որ տեղի ունեցաւ յաջորդ օրն իսկ,

Երեւոյն 16 Յունիսին, Կ.Ս. Ժամը 5:30ին:

Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի բարեջան Առաջնորդ, գերաշնորհ Խաժակ Արք. Պարսամեան, մասնաւորաբար եկած էր Տիթրոյիթէն, բերելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին Օրհնութիւնը եւ բարեմաղթութիւնները: Մատուցուեցաւ Սրբազան Պատարագ, Աթլանթայի «Սէյնթ Էնն Էփիսոփալ» Եկեղեցւոյ մէջ: Պատարագեց սրբազան հայրը մասնակցութեամբ շրջանի հոգեւոր հովիւ Տէր Ներսէս Քահանայ Ճեպենեանի, Աթլանթայի եւ Սէյնթ Փէթերզպուրկի դպրաց դասին որուն անդամները մասնաւոր զոհողութեամբ, մօտ տասը ժամ էջելով, եկած էին փոքրիտայէն:

Աթլանթայի փոքր գաղութին համար աննախնթաց երեւոյթ մըն էր եղածը: Եկեղեցիին մէջ, առաջին շարքերուն վրայ, նստած էին Հայ մարզիկները եւ պատուիրակութեան անդամները: Եկեղեցին լեցուն էր Աթլանթայի եւ շրջանի Հայերով ինչպէս նաեւ հեռաւոր նահանգներէ մասնաւորաբար եկած ազգայիններով:

Անկրկնելի եւ եզակի պատարագ մըն էր որ մատուցուեցաւ: Սրբազան հայրը իր քարոզին մէջ ողջունեց Հայ մարզիկները, Փառք տուաւ Աստուծոյ որ այսօր, ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան մարզիկները բարձր կը պահեն Հայկական դրօշը: Պատեհութիւնը նշեց սրբազանը, կը յիշեցնէ ոգին որ կը տիրէր բոլորին մօտ, Վարդանանցի նախօրեակին:

Եւ իսկապէս, որքան յուզիչ էին այն վայրկեանները, երբ մարզիկները, մէկ առ մէկ, մօտեցան խորանին եւ ստացան Սուրբ հաղորդութիւն: Պատարագի աւարտին, նոյնքան յուզիչ եւ անմոռանալի էին այն վայրկեանները երբ սրբազան հայրը օրհնեց մարզիկները եւ անոնց մաղթեց յաջողութիւն եւ յաղթանակներ:

«ԿԱՅԾՐ ԿՐԱԿԻ ԵՒ ԱՊԱ ԲՈՅԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ  
ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՈԳԻՆ ՄԻՇՏ ԶԵՐՄ ՄՆԱՅ»

Պատարագէն ետք տեղի ունեցաւ նաշկերոյթ-ընդունելութիւն նոյն Եկեղեցւոյ սրահին մէջ մասնակցութեամբ շուրջ երկու հարիւր յիսուն բարի գալուստ մաղթողներու, սրբազան հօր, գաղութի պատասխանատուներուն եւ Հայաստանի մարզիկներուն որոնք առիթը ունեցան փոխադարձ ծանօթացումներու: Գործադրուեցաւ յայտագիր քիչ Վարդան Գասապեանի ատենապետութեամբ:

Բացումը կատարուեցաւ Ամերիկայի եւ Հայաստանի օրհներգներով, կատարողութեամբ դպրաց դասին: Սրբազան հօր աղօթքէն ետք, խօսք առաւ Հայաստանի Ողիմպիական Խումբի ղեկավար (Chief of Mission) Արթուր Գեորգեան, որ մէկ առ մէկ ներկայացուց մարզիկները: Ապա յաջորդաբար խօսք առին, Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի պատուիրակ (Envoys) Արիս Միրիանեան, Հայաստանի Ողիմպիական Կոմիտէի Աթլանթայի կցորդ (Attache) Արա Քիֆըր(Լուսարարեան), Հայաստանի Ազգային Ժողովի անդամ եւ խորհրդարանական ներքին եւ պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ Սամուէլ Գեորգեան որ իր խրատներէ խօսքերուն շարքին մէջ բերեց նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի պատգամը ուղղուած Հայաստանի մարզիկներուն: Առաջին, ըսաւ ան, ունեցէ՛ք պատուախնդրութիւն տալու ձեր լուսագոյնը: Երկրորդ, իմացէ՛ք որ ամբողջ Հայաստան եւ Սփիւռք, կանգնած են ձեր ետին: Երրորդ, Արցախահայութիւնը կանգնած է ձեր ետին:

Ամեն մէկ հայու մաղթանքն է որ բարձր պահէ Հայկական դրօշը:

Պր. Գեորգեան գնահատանքով խօսեցաւ Աթլանթայի փոքրիկ Հայ գաղութին կատարած գործին համար, շնորհակալութիւն յայտնեց որ սատար կը կանգնին Հայաստանի Ռդիմպիական խումբին եւ մաղթեց որ մօտ ապագային Հայ ժողովուրդը կը կարողանայ միանալ Հայաստանի մէջ:

Սօսֆ առաւ նաեւ «Թիմ Արմէնիա» ընկերակցութեան նախագահ եւ գանձապահ Աշոտ Միրիճեանեան որ բացատրեց թէ այս ընկերակցութիւնը կազմուած է Հայաստանի Ազգային Ռդիմպիական Կոմիտէի թելադրութեամբ եւ պարտականութիւնը եղած է կազմակերպել դրամահաւաք, մարզիկներու ծախսերը հոգայու համար: Ան ներկայացուց Տէր եւ Տիկին Ճորճ եւ Ֆլորա Տունայեանները, որպէս Արեւմտեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ եւ Տէր եւ Տիկին Կարպիս եւ Արշօ Գագանեանները որպէս Արեւելեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ: Պր. Միրիճեանեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներուն եւ գործակիցներուն: Որպէս բարի գալուստի արտայայտութիւն, ան մարզիկներուն բաժնեց նուէրներու ծրարներ որոնց մէջ դրուած էին նկարչական մէկական քանակներ եւ այլ օգտակար եւ յիշատակի առարկաներ:

Արժ. Տէր Ներսէս Քահանայ ձեռքնեան շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր անոնց որոնք իրենց մասնակցութիւնը բերին այս ձեռնարկի յաջողութեան համար:

Հարկ էր որ այս անմոռանալի հանդիպումը վերջ գտներ, որովհետեւ երկար նամբորդութենէ եւ անբուն գիշերներէ ետք մարզիկները հանգիստի պէտք ունէին իրենց ուժերը հաւաքելու համար: Մարզիկներ-Հայ գաղութ այս բացառիկ հանդիպումը վերջ գտաւ Սրբազան հօր աղօթքով եւ փակման խօսքով: Սրբազանի փակման խօսքի եզրափակիչ հատուածով վերջ կը գտնէ այս առաջին մամլոյ հաղորդումը Աթլանթայէն.

“ Ես կ'աղօթեմ եւ կը մաղթեմ որ մոխիրին մէջէն (ակնարկելով Եղեռնին) կայծի վերածուած, կայծը կրակի վերածուած, իսկ կրակը բոցի վերածուած մեր ժողովուրդի ոգին միշտ ջերմ մնայ, տաք մնայ: Այդ ջերմութեան մէջ մենք բոլորս ալ առանց խտրութեան զգանք մեր միասնականութիւնը եւ մեր միասնականութեան մէջ զօրավիգ կանգնինք Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութեան: Զօրավիգ կանգնինք Արցախի մէջ պայքարող մեր մարտիկներուն որոնք Հայոց անունը բարձր պահեցին եւ բարձր կը պահեն: Եւ մանաւանդ սիրելիներ, այս օրերուն, աղօթեմք մեր շատ սիրելի մարզիկներուն համար, որպէսզի Աստուած ուժ տայ, կարողութիւն տայ, մանաւանդ կամքը տայ պայքարելու եւ յաղթահարելու: Ես վստահ եմ որ արդէն մենք, մի քանի օրէն, մի քանի շաբաթ վերջ ուրախութեամբ պիտի ծափահարենք ոսկէ մետալ ստացող մեր Հայ մարզիկները: Ես կը շնորհաւորեմ մեր Հայաստանէն եկող մարզիկներուն ղեկավարները, իրենց մարզիչները, բժիշկները, բոլոր անոնց որոնք կը ջանան մարզել այս մարզիկները որպէսզի իսկապէս դառնան Հայաստանին պատիւ բերող եւ ինչու չէ, համայն Հայ ժողովուրդին երջանկութիւն բերող անձեր: Աստուած օրհնէ ձեզ բոլորդ, մանաւանդ Աստուած օրհնէ մեր սիրելի մարզիկները: ”

Կարպիս Գագանեան  
Աթլանթա, Ճորճիա  
17 Յուլիս 1996